



• 1622

L. VIII 7





Esja bemyta fultu, h
mstangla stytta fultu -
ene "Esja bemyta fultu"
fultu: Esja 1 fultu
ytra ordu,

ԱԶԱՏ ԽՕՍԲ

ՏԵՏՐ 1

ՕԳՈՍՏՈՍ 1901

ԲԱՐԻՉ

ՆԱԽԱԲԱՆԻ ՏԵՂ, ԵԹԷ Կ՝ՈՒՉԷՔ.

Ազատ խօսք . . .

Մենք մենէ չենք ծածկեր բնաւ՝ ազատ խօսքը ազա-
տօրէն ըսելու գժուարութիւնները : Բայց մեր անկա-
խութեանը հաճելի է այս գործին ձեռք զարնել, ու մեր
ծիծաղը կամ զայրոյթը լսելի ընել՝ վախկոտ իրաւա-
խտութիւններու, գաճաճ վախերու, տխմար զգու-
շաւորութիւններու, լիբը լուսութիւններու ու ընդատեցնող
ապուշ հաւանութիւններու մէջտեղ :

Յաւակնութիւնը չունինք անպատճառ բան մը շինե-
լու : Փրկիչի հովեր մի՛ սպասէք մենէ . այդ ապրանքէն
չունինք այստեղ . դրացիին նայեցէք : Ըշմարտութեան
ալ խանութ բացած չենք, ու բնաւ օր մը մեր բերնէն
պիտի չլսէք թէ մենէ զատ ուրիշի քով պիտի չգտնէք
անիկա : Բայց մենք մեր գոհացումը պիտի փնտռենք
ծաղրելով կամ ձողկելով, մեր օրուան տրամադրու-
թեանը համեմատ, կեղծ փրկիչները, Սուտին ճարտա-
րապետները, գողցուած համբաւները, անչարժ պոռչը-
տողները, հաշուող խանութավաճառները, անկեղծութեան
աճարարները, հայրենասիրութեան ձեռնածուները, ու,
կ'աւելցնենք, « այլովքն հանդերձ », որպէս զի մէկուն
ա խաթըր չմնայ :

Ազնիւ երեսոյթ մը, բարի գործ մը, իրական արժա-
նիք մը մեզի սակայն անտարբեր չեն թողուր : Եթէ
ստոնց հանդիպելու միտիթարութիւնը ունենանք միւր
ճամբուն վրայ, սրտապին համակրանքի բարեւ մը պիտի
տանք : Բայց — ու ի՛նչ հաճութեամբ ու առատաձեռ-
նութեամբ — ուրիշներուն կը ձգենք իրենց « փառքե-
րը », իրենց « բարեբարները », իրենց « համբաւները », իրենց « արժանաւորները » : Իրենց մարտողութիւնը թող

րոպէ մը իսկ չխանգարի մրցակցութեան մը կարելիութեանն: Միտած խռնկի հոտը անախորժ է մեզի: Ձեռքերնուն մէջ, տաժանագին քրտինքներէ ժանգոտած իրենց բուրվառները գանկանք կ'ազգեն մեզի:

Մեր գերագանցութեանը համոզուած ու անոր մէջ փաթեթուած մարդիկ չենք այտուղ: Կ'ընդունինք ամէն թելադրութիւն, կը բաւէ որ համոզուինք անկեղծութեանը: Ամէն հայ կեդրոններէ, ուր ազատ խօսքը ընկուզժուարութեան հանդիպողներ կան, կրնան համարձակ մեզի գիմել: Ըսենք միայն որ ճառերը չենք սիրեր, շատախօսներէն հեռու կը փախչինք աւելի քան թէ ժոնտախտէն, ու գայթակղութեամբ ապրողները կ'ատենք:

Այսչափը կ'օգտէ, կարծենք:



ԲԱՑ ՆԱՄԱԿ Պ. ՄԱՆԹԱՇԵԱՆԻՆ.

Մի՛ վախնաք, ասիկա այն նամակներէն չէ որոնցմէ կ'երեւնայ թէ տանեակներով կը ստանաք ամէն օր, ամէն անգամ որ Բարիզ ոտք կը կոխէք, եւ որոնց պապուկ պաղատանքներուն ու զգուելի աստուածացումներուն մէջ ետքէն տեսած մարդու ապուշ գոհացումներ գտնելով հանդերձ, չէք ամշտար լալկան ձայնով մը անոնց մասին գանգատելու գէմերնիդ կլլող ամէն մարդու: Մենք ձեզի չենք ճանչնար, ու ճանչնալ ալ չենք ուզեր: Կ'ըսեն որ շատ հարուստ էք: Աշխատեցէք աւելի հարուստ ըլլալու, եթէ երբեք ասանկ յորդորի մը պէտք ունիք. ձեր գիտնալիք գործն է: Ձեր գոյութիւնը իմացանք սա իրողութեամբ որ Բարիզ հայ մատուռ մը չինել կուտար: Ատ ալ ձեր գիտնալիք գործն է:

Բայց ձեզի խորհուրդ մը ունինք տալիք: Մեզի ըսողներ կան թէ, au fond, բարի մարդուկ մըն էք որ կը փափաքիք — օ՛հ, առանց անշուշտ յոգնութիւն մը յանձն առնելու — ձեր ցեղին բարեխառութեանը եւ ազնուացմանը: Եթէ ասիկա ճշմարիտ է, — անկարելի բան չկայ, — ան առեւ ըսենք ձեզի, որպէս զի գիտցած ըլլաք, թէ, գոնէ Բարիզի վրայէն դատելով, երբեք եղած չէ Հայ մը որ իր ցեղին այնչափ լիաս հասուցած ըլլայ որքան գուր:

Դուք պարզապէս կ'ապականէք, կը պոռնկացնէք կոր ամբողջ խումբ մը Հայեր, մուրացկանութեան ամէնէն գարշելի ձևին, ստորնացման ամէնէն դաժ աստիճաններուն մղելով, հարկադրելով զիրենք :

Դուք կը քաջալերէք կոր ամբողջ խումբ մը Հայեր, ոտքերնին ձեռքերնին բռնելու կարող, ո եւ է աշխատութեամբ մը իրենց հացը պարկեշտօրէն ու առնականօրէն վաստկելու կարող շատ մը Հայեր, որոնք ալ ուրիշ բան ըրած չունին բայց եթէ սպասել ձեր տարեկան կրկին այցելութեանը Բարիզ, որպէս զի ձեր պահուիլին դրան առջեւ չարիւսս բարեւ բռնած ու ողնաթեք սպասելով, ձեր ետեւէն վազվտուելով, հայ եկեղեցիին սեմին վրայ ձեզի քսկոտուելով ու ձեր ձեռքերը լլուրդուելով, ձեր մէկ ողորմատու շարժումին արժանանան :

Ձեռք գիտեր թէ ասիացիի ի՛նչ այլանդակ հաճոյք կը գտնէք կոր մուրացկաններու այսպիսի « չքախու մը » մը քաջկրտելով ձեր ետեւէն : Բայց մենք գիտենք թէ ի՛նչ ապականարար գործ մը կը կատարէք կոր կամովին սնուցանելով այդ բոլոր պնակալէզներու, հացկատակներու, « լուացարարներու » անարգ շարքը :

Դուք այդ մարդոց մէջ գիտակցաբար կը մեղսցնէք կոր ամէն առնականութիւն, ամէն հպարտութիւն, ամէն արժանապատուութիւն, ամէն ազնուութիւն, — բաներ որոնց մասին անշուշտ մեծ մտահոգութիւն մը ունենալու չէք — :

Ու մենք ասիկա աղէտք մը կը նկատենք, տեսնելով հեռզհեռէ ծաւալիլը այդ ստորնութեան համաճարակին որուն աղբիւրը ձեռնէ կը բղխի եւ որուն օրինակը չարաշուք կը գառնայ կոր հեռզհեռէ հասնող սերունդներուն համար :

Ու ձեզի պատասխանատու կը ճանչնանք այս աղէտքին :

Յ. Գ. կը մտածենք հիմա թէ գուցէ այս նամակին ոճը շատ համազօծ չըլլայ ձեր « մտաւորականութեան » մակարդակին : Հրաման տուէք ուրեմն ձեր հնազանդ ծառանքէն մէկուն որ ասիկա ձեզի թարգմանէ այն կարելի լեզուովը որ կը հասկնաք : Դուք ալ ու ինքն ալ կլնաք օգտուել :

ՄԷԿ ՀՈՐԻ ԶՈՒՐ.

Հայկական ասպետականութիւնը վերջերս Բարիզի մէջ իր էն փալուն յատկութիւնները երեւան բերաւ :

Իրողութիւնը — կը ցաւիմ որ ստիպուած եմ իրողութիւնը պատմելու — բնեմ երկու բառով , Բարիզէն հեռու ապրողներուն համար : Ազգային գործիչ մը , որ ատենօք իբր բանաստեղծ եւ գրագէտ կը ճանչցուէր — հին պատմութիւն է ասիկա , — Պատուոյ ատենսի մը առջեւ կ'ելլէր՝ ինքզինքը արդարացնելու համար հայ աղջկան մը պատիւը վտանգած ըլլալու — կը փութամ ըսել — արտառոց ամբաստանութիւնէն :

Օրիորդը այսօր ամուսնացած է , զաւկի տէր : Մի մոռնաք ասիկա :

Ու սա խաղբութեանը , սա աներեւակայելի գարշու-թեանը հանդիսատես եղանքը : Ազնուութեան ու զարգացման տէր ճանչցուած երեք պատկառելի մարդ ատեն կաղմեցին , ու լսեցին , կնոջը անուսիկն աչ մեջը ըրալով , տասնեակներով վկաներ , որոնք փոխն ի փոխ ջանացին հերքել կամ ապացուցանել ամբաստանութիւնը , որմէ յետոյ դատաւորները , լրջաբար , վճռագիր մը իրմբագրեցին իրենց համոզումը յայտնող , ու հրապարակ հանեցին զայն :

Ու ասիկա կոչուեցաւ « Պատուոյ ատեն » :

Անպատուութեա՛ն ատեն , այո՛ :

Ամբաստանութիւնը ներկայացնողները , վերջին պահուն , ուչ մնացած փափկանկատութեամբ մը խելաբրած , գոնէ իրենց ամբաստանութիւնը ետ առնելու բարեխղճութիւնը ունեցած էին : Բայց ամբաստանեալը , օ՛հ , կը պնդէր , բոլոր ուժովը , ասպետական անպիհներ քաջութեամբ մը , կը պնդէր որ դատուի . խեղճ կին մը մէջ տեղ պիտի գրուէր , անոր էն փափուկ , էն նուրբական , էն անձնական զգացումները ասոր անոր առջեւ պիտի քաշկուտուէին , ամէնուն բերնին ծամոցը պիտի դառնային , անոր ներքին անհատական կեանքը պիտի լլրճուէր ու անարգուէր . իր հո՞գն էր ասիկա . իր պզտիկ ու զճուճ հաշիւներուն ձեռք կուտար դիւրին յաղթանակ մը տանիլ՝ իր « անմեղութիւնը » ապացուցանելով , հոգ չէ թէ ատով կնոջ մը պատիւը ամէնուն ուրքին կոխան պիտի ըլլար իր պատճառաւ :

Ի՞նչպէս դատաւորները չհասկցան թէ բնաւ , բայց բնա՛ւ իրաւունք չունէին անուանացած կնոջ մը անցեալին մէջ արատախոյզի աղտոտ ձեռքեր պտըտցնելու: Ի՞նչպէս համարձակեցան իրաւազանցութեան այս պժգալի եղեւնը ի գործ դնելու: Ու մտածել թէ հանդիպած առաջին մարդիկը չեն ասոնք , ու մէջերնին , մեր մեղքէն , բրոֆէսոր մըն ալ կայ , իրաւագիտութեան բրոֆէսոր մը , եթէ կը հաճիք : Ըսէ՛ք , ո՞ւր կը սորվեցնեն Աւարկուրիւնը :

Արդէն , այս գործին մէջ ո՛ր կողմը ալ դառնաս , զգուանքի ընկրկում մը կ'ունենաս : Ի՞նչ մտածել այդ ամուսնոյն որ , ժողովքին առջեւ , թղթերու ծրար մը թեւին տակ , առնելիքի տալիքի ճղճիմ ու հասարակ դատ մը պաշտպանող փաստաբանի այլուրութեամբ ու անանձնականութեամբ , իր կնոջը պատիւին համար իրեն եղած էն ցած հարցումներուն հանդարտութեամբ կը պատասխանէ , ու , վկայութիւնը տալէն ետքը , խոնարհութիւնը կ'ընէ ու զուրս կ'ելլէ :

Հապա նոյն իսկ կի՛նն ալ որ , անդին , անտարբեր ու հեռաւոր , կը հանդուրժէ անխօսուկ որ իր պատիւը այդպէս կոխկրտեն , ու ինքնակոչ դատաւորներ ելլեն նիստ գումարուն ու իրենք իրենց պաշտօն ստանձնեն պարկեշտութեան կամ անպարկեշտութեան վկայական մը տալու իրեն :

Ո՛ւՖ , մէկը առ միւսին զարկ : Ամենքն ալ իրար կ'արժեն :

Վախճամ մենք Հոթենթոթներն ալ չենք արժեր :



ՊԱՏՈՒՈՅ ԱՏԵԱՆԸ.

Իր վերջին դիպուածական երեւումին մէջ «Անահիտ» ծանուց , տեսակ մը անհասանելի պարծենքոտութեամբ , Պատուոյ ատեանի մը գումարումը « որ առաջինը պիտի ըլլար արտասահմանի հայ գաղութներուն մէջ » :

Զգիտցողներուն համար ըսենք որ այդ Պատուոյ ատեանին պաշտօնը պիտի ըլլար դատել վերջերս Բարիզ կազմուած Հայկական Միութիւն անուն խառնատարր մարմնի մը անդամներէն Պ. Իսքէնտէրը եւ Պ. Ա. Զօպան-

եանը , որոնց դէմ ծանր ամբաստանութիւններ կ'ընէին Պ. Մ. Գալիփագճեանն եւ Պ. Յ. Գայրսեան :

Ատեանը , քանի մը անվերջանալի նիստերէ ետքը , երկդիմբ վճիռ մը տուաւ որ փոխանակ խնդիրը փակելու՝ նոր դայթակղութեանց դուռ բացաւ :

Պ. Իսքէնտէրի դէմ եղած ամբաստանութիւնն էր ազգային նպատակներու համար հաւաքած զբաններուն մասին հաշիւ չտալու ունակութիւնը , որ գրեթէ մենամուլութեան դարձած էր քսան տարիէ ի վեր շարունակուելով : Վճռագիրը կ'ըսէր թէ Պ. Իսքէնտէր պատուոյ ատեանին առջեւ ըստ բաւականի արդարացուցած էր ինքզինքը :

Գալով Պ. Չօպանեանի , խնդիրը աւելի կ'ընտոտ , ամբաստանութիւնները աւելի բարդ էին :

Հայ Ծուրբիէ Թէնպիլիները կ'ամբաստանէին խեղճը նախ իբրեւ անխիղճ ու անառակ Տօն ժուան մը , երկրորդ իբրեւ անպարկեշտ ու զօշաքաղ Վերես մը , եւ վերջապէս իբրեւ նենգամիտ Տեմոսթէն մը որ հրապարակաւ Փիլիպպոսի դէմ պայքարելով հանդերձ , մութին մէջ մեղապարտ ձեռք մը կը կարկառէ անոր :

Պատուոյ ատեանը ոչ-ապացուցեալ յայտարարեց Տօն ժուանեանն եւ Տեմոսթէնեան մեղքերը , բայց չկլլցաւ , աւա՛ղ , նոյնչափ վատահօրէն վճռել թէ Պ. Չօպանեան պզտիկ Վերես մը չէ :

Ու ահա՛ երկու կողմն ալ հաւասարապէս դժգոհ մնացին տրուած վճռէն :

Ասիկա պատճառ մը չէ սակայն որ արտասահմանի մէջ առաջին անգամ պատուոյ ատեանի մը կազմութեան անըմբռնելի փառքը միմիայնաբար եւ անսայթաքօրէն Պ. Չօպանեանի չերթայ :

ԳԱՂԹԱԿԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ.

Եթէ այս պատմութիւնը ձեզ կը զբօսցնէ՝ շարունակե՛նք :

Պատուոյ ատեանին վճռագրէն ետքը վլվլուքը աւելի բորբոքեցաւ : Անոնք որ Միութեան դէմ ասպարէզ իջած էին , պահանջեցին որ Միութիւնը լուծուէր եւ նոր մը կազմուէր . եւ որովհետեւ , հակառակ ամէնուն ակընկալութեան , Միութիւնը իր հին տարրերով տոկալ կը

փորձէր, « խուճը մը փարիզաբնակ հայերու կողմէ »
Պ. Գալփաղճեանն եւ Պ. Գայանեան հրաւիրեցին Բարիզի
Հայերը գաղթականային ժողովի մը որ տեղի ունեցաւ
31 յուլիսին: Հրաւիրագիրը, գրեթէ կոչնագիր մը, կ'ը-
սէր. « Անհրաժեշտ է որ բարեհաճիք մասնակցիլ այդ
ժողովին, ապագային ձեր բունելիք դիրքը որոշելու եւ
բարոյական պատասխանատուութենէ զերժ մնալու հա-
մար:»

Ապագայ անկ պատասխանատուութենէ մը սահմու-
կած՝ 150ի չափ Հայեր փութացած էին Կրանդ Օրբանի
մեծ սրահը:

Պ. Գայանեան եւ Պ. Գալփաղճեան հետզհետէ բեմ
ելլելով խօսեցան, բաբէ՛, չափազանց մանրամասնօրէն,
Հայկական Միութեան եւ պատուոյ ատեանին մասին եւ
մէջտեղ դրին իրենց ամբաստանութիւնները որոնցմէ
ոմանք, թեթեւ ու խարխուլ փաստերու վրայ հիմնուած,
չկրցան տակալ ունկնդիրներու ողջմտութեան առջեւ:
Պարիչներ, աւելի բախտաւոր, ազդեցին քիչ շատ, այլ
գրեթէ վճռական եղաւ Պ. Ա. Չօպանեանի մէկ ընդար-
ձակ նամակը Պ. Արքայի ուղղուած որուն մէջ « Արչա-
լոյսի Չօյներ »ու հազներգուն երեւան եկաւ իբր Պար-
սիկ մը խաղի բերելու եւ Հրեայ մը շուարեցնելու կարող
հանած—վարած գործի մարդ մը:

Պ. Ա. Չօպանեան ժողովին մէջ ունեցաւ երկու փաս-
տաբան, մին սրահին աջ կողմը տեղաւորուած եւ միւսը
ձախ կողմը, Պ. Արմէն Իփէքեան եւ Պ. Գրիգոր Գալ-
ֆանեան անուն: Յուզիչ բան մըն էր տեսնել այդ երկու
պարոնները որոնք սրտաձմիկ ջանքով մը իրենց փոխն
ի փոխ ընդմիջումներով ջանացին օգտակարապէս ի գլուխ
հանել իրենց յանձնուած պաշտօնը:

Պ. Ա. Չօպանեան կրնայ վստահ ըլլալ որ եթէ Պ.
Միհրգատեանցի առաջարկին վրայ ժողովը քանի մը
քուէի դէմ միաձայն հաւանութեամբ փափաք յայտնեց
Հայկական Միութեան անմիջապէս լուծուելուն, յան-
ցանքը իր մեծ բարեկամներուն՝ Պ. Գրիգոր Գալփանեանի
եւ Պ. Արմէն Իփէքեանի՝ չէ:

Ժողովին մէջ Պ. Չօպանեանի համար առաջին անգամ
Պ. Գրիգոր Գալփանեան բեմ ելաւ եւ իր պերճախօսու-
թիւնը թափեց: Կարժէ որ « առաջին անգամներ »ու
հաւաքածոյին մէջ « Անահիտ »ի խմբագիրը յիշէ այս
կարեւոր պարագան:

Նոյն իսկ կարելի չէ՞ արգեօք որ անսհիտեան խումբագրականով մը հայ ազգին ճանչցուի Պ. Գրիգոր Գալֆանանը որ թէև ծանօթ Աթէնքի, Բիքէի ու Եգիպտոսի Հայերուն, անծանօթ կը մնայ ընդհանուր Հայութեան :

Պ. Զօպանեան պէտք է շտապէ առաջին անգամ ընելու այս բանը, որպէս զի իրմէ առաջ ուրիշները չփորձեն :

ՀՈԳԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ.

Պ. Մանթաշօֆ մեր հոգիներուն փրկութեանը չ'աշխատիր միայն, միեւնոյն ժամանակ մարմիննին ալ զօրացնելու ջանք կ'ընէ. « Փրկուած հոգիներ առողջ մարմինի մէջ », կը թուի ըլլալ մեր մանրագիտական Գարնդկիին նշանաբանը :

Այս կրկին նպատակներուն հասնելու համար մինչ մէկ կողմէն Բարիզի մէջ եկեղեցի շինել կուտայ, միւս կողմէն քանի մը տարիէ ի վեր քայլարշաւ մը հաստատած է որուն կը մասնակցին բարիգաբնակ հայ « մեծապատիւ մուրացկանները » :

Մրցման պայմանը շատ պարզ է :

Պ. Մանթաշօֆ Բարիզ հասնելուն պէս, ամէն մէկ մուրացկան պէտք է իր ընակած փողոցէն ճամբայ ելլէ եւ վազն ի վազ դէպի Պ. Մանթաշօֆին իջած պանդոկը դիմէ : Առաջին հասնողը մեծ պարգևէին կ'արժանանայ, երկրորդը եւ երրորդը՝ առաջին ու երկրորդ մրցանակը կ'ընդունին, իսկ մնացածներուն պատշաշը հետզհետէ կ'իջնայ մինչև հինգ ֆրանքի : Այս սարուան steeple-chaseին մեծ պարգևը նորէն Մ. Չերազ շահած է, իսկ առաջին ու երկրորդ մրցանակները Պ. Ս. Հախումեան եւ Ա. Զօպանեան :

Այս ոլիմպիական խաղով ո՛չ թէ միայն մրցակիցներուն սրունքները կը բարզաւաճին, այլ միեւնոյն ատեն իրենց մտային կարողութիւններն ալ կը սրուին եղբ, որովհետև մրցակիցները առաջին մրցանակը խլելու համար խելք կը յոգնեցնեն, օրերով միջոցներ կը խորհին ոտխներու դէմ արգելքներ յարուցանելու, ճար կը փնտռեն մինչև պանդոկին դուռը հասնելէ ետքը չվճռնու-

ուելու եւ այսպէսով իրենց ուղեղը միշտ եռանդուն ու ժիր գործունէութեան մը կ'ենթարկեն :

Այս տարուան մրցութեան արդիւնքը ափ ի բերան ըրած է Պ. Մ. Չերազը, որ տակաւին չէ կրցած խելք հասցնել թէ ի'նչպէս Պ. Ա. Չօպանեան, որ երեք տարիէ ի վեր ամէն անգամ անյաջող ելած էր, կրցած է արժանանալ մրցանակի :

Այս տեսակ sportներու ներքնակողմը գիտցող իրազեկ անձեր կը հաւաստեն որ Պ. Ա. Չօպանեան իր յաղթութիւնը պարտական է իր այս տարուան entraînement Պ. Միհրան Յովակիմեանի :

Չմոռնանք ըսելու որ քայլարշաւին մասնակցելու համար անպատճառ ազգային փրկիչ կամ խմբագիր ըլլալու հարկ չկայ : Թատերագիր, նկարիչ, գերասան, ուսանող կամ իշխան ազատ են մասնակցելու, բաւ է է որ Բարիզի հայ պապուկներու սէնտիքային անդամ ճանչցուած ըլլան :

ԱՒԱՂԱՆՔ ԵՒ ԻԴՁ.

Ձի դժուար է տունին նամբան մեկուոր
Ոտուրներուս անկայուն :

Ամէն անգամ որ միտքս կուգայ այս տողերուն անսահման յոգնութիւնը, անոնց տրտմութեան չըլլալէք տրտմութիւնը, ու այն բովանդակ հրապոյրը որ կը կաթկթէ քերթուածին ազնուական զգայնութենէն, անհետացած աղւոր երազի մը դժնդակ տպաւորութիւնը կ'ունենամ :

98ին էր որ Եգիպտոսի Փարոսը սկսաւ հրատարակել չարք մը քերթուածներու, անձանօթի մը անունին տակ : Յանկարծական յայտնութիւն մը եղաւ ասիկա : Բանաստեղծ մըն էր որ երեւան կուգար մեղի, ու հազուադիւտ տեսակէն, որ անհրաժեշտ զմայլելի փափկութեան մը կը միացնէր իրերուն ու երևոյթներուն խորհուլքը խորպչէս կրելու եւ ճապուկ, ճոխ ու ժուժկալ լեզուով մը արտայայտելու գերազանց կարողութիւնը, գիտնալով չհետու մնալ վարնոց առատութեան եւ շինծու զգայնականութեան դիւրին ճամբաներէն :

Փարոսին հետ քերթուածներն ալ դադրեցան, ու մեր

վայելքը կէս ճամբան մնաց , սրտագին աւազանք մը մտայն թողով մեղի : Իմացանք որ անոնց հեղինակը , Պ. Արտաւազը Հանրմտան, Նեղոսի փոռուքներէն Բարիկ փոխադրուած էր, հոն թաղած իր պատանութեան բոլոր թանկագին յուզումները, ու Արհեստագիտական Գիմբայի էնսթիթիւն մտած էր , այլամերժօրէն ինքզինքը նուիրելով Գիտութեան , այն դիւրաթեքութեամբ որ մտաւորական հիմնական կարողութեանց յատկանիչն է :

Այսօր ուրախութեամբ կ'իմանանք թէ Պ. Հանրմտան մեծ յաջողութեամբ աւարտած է իր համալսարանական չրջանը, երկրորդ ելլելով 3) աչակերտի մէջէ: Վաղը հարկաւ պիտի մտնէ կեանքի կոիւրն մէջ, ուր եղբայրօրէն կը մաղթենք իրեն ամէն յաջողութիւն : Ինքն ալ իր բաժինը պիտի ունենայ բոլոր ցաւերէն , կսկիծներէն , յուսախաբութիւններէն , ընդհարումներէն բոլոր այն խութեղուն վրայ ուր մէկիկ մէկիկ կը նաւարեկին մեր պատրանքները , մեր երազները , մեր սէրերը: Ու ի՞նչքան պիտի ուզէինք , պատանին անուշ ու մաղձոտ միւշգրիկն սխրանքով ունկնդրած ըլլալէ ետքը , մտիկ ընել այս անգամ հասուն մարդուն խրոխտ ու տիրական երգին որ իր սփոփանքը պիտի ըլլար կեանքին տաժանքէն , ու մեր ալ վայելքը :

ԳՏԱՆԻ ՊՏՏՃԱՌԻ.

Յուլիս 31ի պատմական Ժողովին՝ ոչ նուազ պատմական Ռիւ Գառէի սրահին մէջ՝ յանկարծ բանալին գտանք այն չարանախանձ թշնամութեան որ կը հալածէ « Անահիտ »ի քրմապետը :

Անկիւն մը նստած՝ քուներնիս չտանելու համար՝ աշխատեցանք համբել առաջին ատենաբան Պ. Գայսեանի բլխուն մաղերը : Եթէ ետեւի կողմէն անանայինք զայն թերեւս կարենայինք քանի մը վայրկեան սպաննել , բայց ճակատէն կ'երեւակայէք որ ջանքերնիս զուր ելան: Յուսահատած աչքերնիս դէպի գիւտնը դարձուցինք ուր կը նստապահէր Պ. Մինաս Չերազ . իր յուսահատօրէն զատարկ բլխին վրայ գտնուող ցանցառ մազերը համբելու վրայ էինք երբ յանկարծ ետեւէ ետեւ ճաղատնեւ

բու խումբ մը ամպիոնը գրաւեց, մինչեւ ամէնէն վերջինը Պ. Մ. Միհրդատեանց :

Ու մէկէն ի մէկ յայտնութիւնը ունեցանք որ այդ մարդիկը բոլոր Զօպանեանի երկար ու գանգուր մազերէն խելայեղ՝ յաւիտենական ատելութիւն ուխտած էին անոր դէմ :

Հիմակ սահմուկելով կը խորհինք ճաղատներու այն ամենի խաչակրութեան որ պիտի հալածէր խեղճը եթէ այդ երկար ու գանգուր մազերը գոնէ քիչ մը մաքուր ըլլային :



ԱՂՈՒՌՐ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ.

Կատաղի, կամ եթէ կ'ուզէք խեղկատակ, գորտամկնամարտը զոր ժամանակէ մը ի վեր իբրարու դէմ կը մղէին երեք քաջազուններ, Պ.Պ. Մ. Չերազ, Ա. Զօպանեան եւ Ս. Հախումեան, հաշտութեամբ վերջացած է :

Այս դէպքը որ ժամանակակից հայ մուրացկանութեան համար կարեւոր պարագայ մըն է կ'արժէ պատմել համառօտ կերպով :

Պ. Մանթաշեանի վերջին անգամ Բարեղ հասնելուն առաջին օրը, դիպումածական զուգադիպութեամբ մը, գրեթէ անգիտակցաբար, մեր երեք ոստիւնները Ոսկի Հորթի պանդոկը իր ննջատենեակին գրան առջեւ իրարու կը հանդիպին : Հագիւ խոժոռ, բղկախի նայուածքներու ճակատամարտի մը սկսած, յանկարծ կը լսուի նրբանցքին մէջ ոտնաձայնը Մեկենասին որ գիշերազգեստով ու ներքնավարոիքին կապիչները գետին քրակրտելով կը յառաջանայ : Կո՛ ու անձնգիւր ճառագայթում մը կայ դէմքին վրայ որ արդիւնքն է անշուշտ ընական պարտք մը կատարած ըլլալու խղճի հանգարտութեան : Երեք « ինտէլիկէնտ » ները « Ան է » կը մըմուսն սրտատրոփ եւ կ'առնեն այն աղաչաւոր մուրացկանի դիրքը որ միշտ ստորնացուցիչ է որչափ ալ « խրոխտաբար » ընելու ջանք թափուի :

Պ. Մանթաշեան հշիւք ասնարիի մը մէջ է ու ոսկեփայլ ժպիտ մը կը թրթռայ դէմքին վրայ :

Պ. Մինաս կը փութայ ննջատենեակին գուռը բանալ,

Պ. Հախումեան եւ Չօպանեան ընդ առաջ կը դիմեն թե-
թեւեցնելու համար «բարեբար»ը ձեռքը բռնած ղենջակէն:

— Ի՞նչ կը սքստաք այստեղ, կ'ըսէ ներողամիտ շեշ-
տով մը Պ. Մանթաշեան, եկէ՛ք տեսնեմ . . . երեւի իմ
գայլը իմանալով քնեցնիդ չէ տարել :

Այս խօսքերուն մինչ Պ. Մինաս Չերագ եւ Ս. Հա-
խումեան քծնաբար կը ժպտին (անա՛րգ հոգիներ), Պ. Ա.
Չօպանեան, հաւատարիմ իր դաւանած սկզբունքին,
«խրոխտաբար» կը ժպտի (հպա՛րտ հոգի) :

Վայրկեան մը ետքը, Պ. Մանթաշեան երկնցած է
բազմոցին վրայ ու յ'Արմենիի, Անանիսի եւ Ժարմանակի
խմբագիրները գէ՛մը շարուած .

— Նստէ՛ք, նստէ՛ք :

Ու ահա՛ խօսակցութիւնը կը սկսի եւ Պ. Մանթաշ-
եան կ'իմանայ թէ այդ երեք պարոնները որոնք իր նրն-
ջասենեակին դրան առջեւ միացած էին՝ գրական հրա-
պարակին վրայ անհաշտ թշնամիներ են իրարու :

— Խօ՛, գիժացել էք դուք, կը գոչէ զարմանքով, քիչ
մը յանդիմանական քիչ մըն ալ ծաղրական շեշտով մը,
ինչո՞ւ է դպէս իրար էք հալածում հրապարակի վրայ . . .
միթէ՛ ամէնքդ էլ մի գաղափարի, մի սկզբունքի, մի
նկարագրի մարդիկ չէ՞ք, էլի ի՞նչ քէօքէ օղլի պան է
այդ . . . երբ ինչքի՛ր փող խնդրելու մասին է ամէնքդ
էլ միաբանութեամբ շտապում էք ինձ մօտ, ինչո՞ւ նոյն
միաբանութեամբ չէք վարուում ձեր թերթերի մէջ . . .
ախրըր ես ձեզ լաւ ճանաչում եմ, ամէնքդ էլ իրար
արժում էք հաւասար չափով . . . արի՛ համարուեցէք:

— Բայց ներեցէք, տէր բարեբար, դիտել կուտայ
Պ. Չօպանեան, իրաւ Պ. Չերագի եւ իմ նպատակները
նոյն են, բայց միջոցներու մասին իրարմէ բոլորովին
կը տարբերինք . . . անիկա քծնաբար մուրացող դպրոցին
կը պատկանի, մինչդեռ ես «խրոխտաբար» պահանջող
դպրոցին պետն եմ. այս երկու դպրոցներուն ուղղու-
թեան եւ ձգտումներուն մասին խմբագրականով մը
երկարօրէէ գրած եմ «Անահիտ»ի մէջ . . .

— Ես չեմ հասկանում այդ քէօքէ օղլի տարբերու-
թիւնները, խօ՛ ես փիլիսոփայ չեմ . . . մինչ քծնաբար
է ուղում, միւսդ խրոխտաբար, բայց իմ գրպանէս ելած
փողը երկուսիդ համար էլ նոյն է, արի՛ համարուեցէք:

— Բայց ներեցէք, պարոն Մանթաշեան, ես խրոխ-
տաբար . . .

Պ. Մանթաշեան անհամբերութեան շարժում մը կ'ընէ, ոտք կ'ելլէ, դարակէն քանի մը հատ հարիւրնոց պանքնօթ կ'առնէ ու զանոնք մատուրներուն ծայրովը օդին մէջ ճօճելով կը կրկնէ .

— Արի՛ շուտ համբուրուեցէք, եթէ ո՛չ . . .

Դեռ սպառնալիքը չաւարտած կրեք անհաշտները իրարու գերկ կ'իյնան :

Այս սրտայոյզ տեսարանէն խորապէս զգածուած՝ Պ. Մանթաշեան հաշտութիւնը աւելի ամրապնդելու համար կրեք « ինտելիկէնտ »ները կերակուրի կը տանի :

Վարագոյր :

ԶՈՒԿԱԿՇԻՌ . . . ՈՉ ՊԼՈՒՏԱՐԻՈՍԻ .

Թերթերը բրեցին Պոլսոյ ֆրանսական գեսպանին յարուցած միջադէպը Պոլսոյ քարափններուն առթիւ, միջադէպ որ պահ մը կարծեցնել տուաւ որ ֆրանսական եւ թիւրք կառավարութեանց միջեւ խզում առաջ պիտի բերէր : Պ. Բոնսթան անմիջական գոհացում ստանալու համար նոյն իսկ սպառնաց ֆրանսական նաւատորմի ջոմանեան ջուրերը զրկել տալ : Սուլթանը տեղի չտուաւ եւ նաւատորմի ջուրէն չչարժեցաւ :

Որչա՛փ տարրեր էր սակայն քանի մը ամիս առաջուան միջադէպը Պ. Չօպանեանի եւ Սուլթանին միջեւ : « Անահիտ »ի խմբագիրը, առանց սին սպառնալիքներու, կրեք մարտանաւ զրկեց Մերսինի ջուրերը եւ իր խօսքը քախցուց անմիջապէս :

Երկու միջադէպերու այս պարզ զուգակցութիւնը պէտք չունի որ եւ է մնկնութեան :

Եւ դեռ հայ հարուստներ կա՛ն որոնք չեն ուզեր « կլլել » այդ կրեք մարտանաւերը եւ կը մերժեն « ցընծալ » երբոր Պ. Չօպանեան « խրոխտաբար » մուրալու կ'երթայ եւ թոյլ կուտան որ այդ փոռքը ֆրանսացիներ եւ եգիպտացի իշխաններ կապան իրենցմէ :

Ամօ՛թ իրենց . . . :

ԼՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ.

Պ. Հախումեան իր « Ժամանակ » թերթին մէջ հետեւեալը կը գրէ Պ. Զօպանեանի համար .

... « Մեր հանգէսը չենք զբաղեցնի մի անձնաւորութեամբ որ կրում է « խմբագիր » անունը Ֆրանսայի մայրաքաղաքում եւ միեւնոյն ժամանակ դատի է եսթարկվում իբրեւ escroc եւ զրանից մի քիչ էլ աւելի : »

Պ. Հախումեանի այս անբարեխիղճ տողերը կարգացող հեռաւոր ազգայինները, եթէ գործէն տեղեկութեան չունին, պիտի կարծեն թէ Պ. Զօպանեան հասարակ տօշակօջրը մը պէս Բարբի ոտտիկանութենէն բնուած եւ դատի ենթարկուած է : Պ. Հախումեանի աններկի է իրողութիւնները այսպէս խեղաթիւրել : Ամօթ է, ուէն տարրական պարկեշտութեան հակառակ, եղելութիւնները չարափոխել եւ փաստերը խաթարել :

ՆՈՐ ԿԵԱՆՔ . . . ՊԱՐԹԵՒԵԱՆԻ.

Բարբի մէջ օրուան լուրերէն մին է սա թէ ծանօթ գրագէտ Պ. Սուրէն Պարթեւեան, « Վաղուան Զայն » ի նախկին հրատարակիչը, որ վերջերս կ'աշխատակցէր « Ժողովուրդին Համար » ին, հիմակ զպղբեցուցուած է « Ժողովուրդին Համար » ին մասնակցելէ, ինքզինքը վերջնապէս նուիրած ըլլալով « Նոր Կեանք » ին զօր, ինչպէս ամէն մարդ գիտէ, կը խմբագրէ ներկայ տարուան 10րդ թիւէն սկսեալ :

ՊՈՒՎ՝ ՄԻՇ՝Ի ՎՐԱՅ.

Երկու « խրոխտաբար » ներու միջեւ .

— Իմացա՞ր, Հախումեանը քանի մը հարիւր ֆրանք իրջուցեր է Մանթաշօֆէն :

— Է՛հ, չէ՞ս գիտեր անգլիական առածը՝ « Ժամանակը » գրամ է . . . :

ՆԱԽԱՍԱՀՄԱՆՆԱԼՆԵՐ.

Չօ	ղ	անեան
Չեր	Ա	զ
	ղ	ասմանեան
Հախ	ՈՒ	մեան
ժամանա	Կ	
Ա.	Ն	անիս
Արմ	Ե	Յի
Բանասէ	Բ	

ՀԱՐԿՍ ՀԱՐԿԵՒՈՐԱՑ.

Թերթը տպագրութեան յանձնելէ առաջ վերջին նայուածքէ մը անցընելով, կը տեսնենք որ Բարիզի անձերն ու անցքերը այլամերժ տեղ մը կը գրաւեն հոն : Ասիկա չի համապատասխանէր անշուշտ լիովին մեր թերթին ծրագրին , որ ընդհանրական գիտումներ ունի : Բայց , ի՞նչ ընել , եւ ի՞նչ կերպ կարելի չէր : Մարդ երբ չորս կողմը մտքելու կ'ելլէ , նախ ոտքին տակ իջնող աղտուտութիւնները վերցնելու կ'աշխատի : Բայց միւսներն ալ , քիչ մը սպասելով , բան պիտի չկորսնցնեն :

ՂՍԵՄ ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ.

Մտացի եւ ուշադիր ընթերցողները գուցէ կարող եղան նշմարել թէ Ազատ Խօսքի յօդուածներուն տակ ստորագրութիւն չի կայ , ինչպէս չի կայ թերթին գլուխը կամ ոտըր անօրէնի կամ խմբագրի անուն :

Սրբ , տարտամ նախազգացումն ունինք , — առանց փառասիրութեան նշոյլի , — թէ ոմանք վերաւորուած պիտի զգան ինքզինքնին մեր չափազանց անկեղծ գնահատումներէն եւ պիտի վնասեն այն ամբարիշտ մասները որոնք իրենց հանգիստը խռովելու համար կարծես շարժիլ ուխտած են : Աւ չգտնելով որ եւ է անուն , գուցէ ուզեն պահուրտած քինախնդիր գիմակաւորի մը

ուրուականը տեսնել Ազատ Խօսքի ետին: Այս անպատե-
հութեան առաջըր առնելու համար, Պ. Երուանդ Օտեան
կրցած է իր հոգիին ալքերուն մէջ գտնալ պէտք եղած
չափով անձնուրացութիւն՝ ինքզինքը ներկայացնելու հա-
մար հասարակութեան իբրև միակ պատասխանատուն
Ազատ Խօսքի մէջ հրատարակուած ամէն յօդուածներու :
Ասով գիտէ թէ իր գլխուն վրայ պիտի հրաւիրէ շան-
թերը այն թղուկ Արամազդներուն որոնք հրապարակ
պիտի իջնեն պաշտպանելու համար իրենց . . . պատիւը :
Չենք գիտեր ի՞նչ միտքիքական գոհացում մը կ'ուզէ
վայելել Պ. Երուանդ Օտեան ինքզինքը կնխարկելով այս
խոշտանգանքին, բայց չենք վարանիր ըսելու որ Յիսուս
Գողգոթայի վրայ խաչուած եւ Պ. Երուանդ Օտեան Ազատ
Խօսքի մէջ կուրծքը բացած՝ այն երկու մեծ պատկերներն
են զորս մարդկութիւնը արտազրած է «Եղիցի լոյս»էն
ի վեր: Յիսուս իր վարձըր ստացաւ բազմելով Աստուծոյ
աջ կողմը. ձախ կողմըր մինչեւ հիմա պարապ մնացած էր:
— Հրամանէ՛ք, Պ. Երուանդ Օտեան :

«ԱԶԱՏ ԽՕՍՔ»Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Ազատ Խօսքը պարբերական հրատարակութիւն մը պիտի լլլայ
սարին առ նուազն 12 թիւով, բայց հաւանական է որ այդ թիւին
մէջ չսահմանափակուի մեր հրատարակութիւնը, հետեւաբար որոճած
ենք բաժանորդագրութիւնը թիւի վրայ ընել :

12 թիւի բաժնեգինն է Եւրոպայի եւ Ռուսիայի համար 5 ֆր.
իսկ Ամերիկայի համար 1 ցոյար :

Ազատ Խօսքի մէկ թիւին գինն է 50 սանթիմ:

Բացարձակապէս որոճած ենք երկու թիւն աւելի չդրելի անոնց
որոնք մինչեւ այն ժամանակ մեզի չեն հասուցած բաժնեգինը որ
կանխիկ է :

Մեր հասցէն է

M. PERRIER

Pour AZAD KHOSK

4, rue des Guillemites

PARIS (IV^{me})

Le Gérant : B. CHOTARD.

IMPRIMERIE ARMÉNIENNE. 45, Boulevard Arago, PARIS